Թեմա 1

Տնտեսագիտության տեսության առարկան և ուսումնասիրության մեթոդները

Հարց 1.
Ընդհանուր պատկերացումներ տնտեսության մասին

Մեզ շրջապատող բնությունը բարդ է ու բազմաբնույթ: Այդ բազմազանության համակարգում է գործում մարդը՝ օժտված գիտակցված և նպատակաուղղված գործունեություն իրականացնելու ընդունակությամբ:

Իր գոյությունը պահպա- նելու անհրաժեշտությունից ելնելով, մարդը ջանքեր է գործադրել՝ աշխատել է, և դա նրա գոյատևման ելակե- տային պայմանն է ու գլխա- վոր առանձնահատկությունը:

Մարդու տնտեսական գործու- նեության հիմքում ընկած է նրա պահանջմունքների բավարար- ման անհարժեշտությունը: «Պատմության ամբողջ ընթացքի վերլուծությունն ապացուցում է, որ մարդկանց գործունեությունը բխում է նրանց պահանջմունք- ներից, կրքերից, և միայն դրանք են կարևոր դեր խաղում

Իրենց պահանջմունքների բավարարման նպատակով մարդիկ կազմակերպում են բարիքների արտադրություն: Արտադրությունը մարդկանց նպատակասլաց գործունեությունն է, որն ուղղված է նրանց պահանջմունքների բավարարմանը: Մարդու պահանջմունքները բազմաբնույթ են. սնունդ, հագուստ, բնակարան, փոխադրամիջոց, տարբեր տեսակի ծառայություններ, կրթություն, առողջապահություն և այլն:

Բարիքների արտադրությունը հնարավոր է իրականացնել համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում: Ռեսուրսները արտադրական նշանակության միջոցներ են, որոնք տրվում են բնության կամ ստեղծվում են մարդու կողմից:

Ռեսուրս են համարվում հողը, օգտակար հանածոները, գազը, նավթը, անտառը, ջուրը, բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև մարդու ստեղծած մեքենաները, սարքավորումները, գիտատեխ-իկական նորություններն ու հայտնագործությունները, շենքերն ու կառույցները և այլն:

Ռեսուրսները սահմանափակ են և առաջանում է ռեսուրսների խնայողաբար և նպատակային օգտագործման խնդիր: Սա նշա- նակում է՝ անհրաժեշտ է հնարավորության սահմաններում ապահովել ռեսուրսների անկորուստ օգտագործում և բարիքի արտա- դրության ճիշտ ընտրություն:

Այս հանգամանքը ստիպում է մարդուն գործել ռացիոնալ.

Հասնել առավելագույն արդյունքի սահմանափակ ռեսուրսների հնարավոր նվազագույն ծախսերով:

Մարդու ռացիոնալ վարքագիծը բխում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունից: Այլ կերպ ասած՝ ռացիոնալ վարքագծի հիմքում ընկած է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, այսինքն՝ նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ապահովումը:

Հարց 2. Տնտեսագիտության տեսության առարկան

Գիտություններ

- Հասարակական
- Բնական

Բնական գիտությունները

հետազոտում են բնության ու տեխնիկայի զարգացման օրենքներն ու օրինաչափությունները. մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա, երկրաբանություն, աստղագիտություն, աշխարհագրություն և այլն

Հասարակական գիտությունները

ուսումնասիրում են հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, հասարակական հարաբերությունների համակարգը

Տնտեսագիտության տեսությունը հասարակական գիտություն է, քանի որ ուսումնասիրում է հասարակական հարաբերությունների տնտեսական կողմը:

Տեսագիտության տեսության ձևավորումը կապված է ֆրանսիացի տնտեսագետ Անտուան դե Մոնկրետիենի «Քաղաքատնտեսության տրակտատ» /1615 թ./ աշխատության լույսընծայման հետ:

«Քաղաքատնտեսություն» բառը հու- նարեն երեք բառերի միացություն է.

- «պոլիտեա»- պետություն, քաղաքականություն,
- «օյկոս»- տուն, տնտեսություն,
- «նոմոս»- օրենք:

Սկզբնական պատկերացումներ և մեկնաբանություններ տնտեսության մասին տրվել են Քսենոֆոնի և Արիստոտելի կողմից մ. թ.ա.:

Քսենոֆոնը գրել է «Էկոնոմիկա» աշխատությունը (մ.թ.ա. 5-րդ դար), որտեղ Էկոնոմիկա տերմինը մեկնաբանվել է որպես արվեստ, գիտություն տնային տնտեսությունը կառավարելու մասին:

Ըստ Լ.Ռոբինսի

«Տնտեսագիտությունը, որպես գիտություն, ուսումնասիրում է մարդու վարքագիծը նպատակ- ների և սահմանափակ միջոց- ների փոխհարաբերության տե- սանկյունից, որոնք կարող են ունենալ տարբեր կիրառություն»:

Տնտեսագիտությունը, որպես գիտություն, ծագել է սահմանափակ ռեսուրսների ար- դյունավետ օգտագործման և պահանջմունքների բավարար – ման առավելագույն մակարդակ ապահովելու հնարավորություն– ների ուսումնասիրման անհրա- ժեշտությունից:

Բազմաթիվ տնտեսագետների կարծիքով՝

տնտեսագիտության տեսությունը գիտություն է ռեսուրսների ընտրության և մարդու տնտեսական վարքագծի մասին:

Փ. Սամուելսոնը ներկայացնում է տնտեսագիտության տեսության մի շարք սահմանումներ: Այսպես՝ տնտեսագիտության տեսությունը գիտություն է.

1.գործունեության տեսակների մասին, որոնք կապված են փոխանակության և մարդկանց միջև դրամական գործարքների հետ,

2.մարդկանց ամենօրյա կենսագործունեության մասին,

3.այն մասին, թե ինչպես է մարդկությունը կարողանում լուծել սպառման և արտադրության ոլորտի խնդիրները,

4.Հարստության մասին:

Մարդու աշխատանքային գործունեության տեսակներն ունեն հետևյալ բնույթը.

1. միմյանցից մեկուսացված չեն,
2. գտնվում են որոշակի կապերի ու փոխհարաբերությունների մեջ,
3. դրանց փոխհարաբերությունների արդյունքում ձևավորվում է տնտեսություն հասկացությունը:
4. մարդը և՛ արտադրող է, և՛ սպառող:

Այսպիսով՝ ընդունելի է այն մոտեցումը, համաձայն որի՝ տնտեսագիտության տեսությունն ուսումնասիրում է մարդկանց տնտեսական վարքագիծը սահմանափակ ռեսուրսների պայմաններում:

Տնտեսագիտության տեսության ուսումնասիրության

օբյեկտը դա.

ամբողջ տնտեսական համակարգն է, որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն տնտեսական հարաբերությունները, այլև արտադրության կազմակերպ- ման հետ կապված հարաբերու- թյունները և պետության վարած տնտեսական քաղաքականությունը:

Հարց 3.
Տնտեսագիտության տեսության գործառույթները

Տնտեսագիտության տեսության հետազոտության արդյունքները օգ- տագործվում են մյուս տնտեսական գիտությունների (ֆինանսներ, հաշ- վապահական հաշվառում, կառա- վարում, աշխատանքի տնտեսա- գիտության, բնօգտագործման տնտե- սագիտության, շուկայագիտություն և այլնի) կողմից:

Ճանաչողական

Հնարավորություն է տալիս ճանաչել տնտեսական երևույթները, գործընթացները, կապերն ու փոխհարաբերությունները, օրենքներն ու օրինաչափությունները

Կիրառական

Տնտեսական երևույթների, գործընթաց- ների, կապերի և փոխհարաբերությունների ճանաչողության արդյունքում ձևավորված տրամաբանական հետևությունները կիրառ- վում են տնտեսական քաղաքականության և/կամ առօրյա տնտեսական գործունեության մեջ:

Մեթոդաբանական

Տնտեսագիտության տեսությունը մեթոդաբանական հիմք է հանդի-սանում մյուս տնտեսագիտական գիտություններին համար

Կանխատեսման

Տնտեսագիտության տեսությունը հնարավորություն է տալիս կանխատեսելու հնարավոր փոփոխությունները և զարգացման այլընտրանքային տարբերակները

Աշխարհայացքային

Տնտեսական երևույթների ու գործընթացների, օրենքների և օրինաչափությունների, դրանց զարգացման միտումների մասին ընդհանուր պատկեացումները ընդլայնում են աշխարհայացքը

Տնտեսագիտության տեսության գործառույթները գտնվում են օրգանական միասնության մեջ, և դրանց տարանջատումը կրում է պայմանական բնույթ: Տնտեսական երևույթների ճանաչողության արդյունքում ի հայտ են գալիս այնպիսի նոր օրինաչափություններ, իսկ երբեմն նաև հասկացություններ, որոնք առկա պատկերացումների սահմաններից դուրս են:

Հարց 4. Տնտեսագիտության տեսության ուսումնասիրության մեթոդները

Մեթոդը հնարքների, գործիքների, միջոցների և եղանակների ամբողջությունն է, որով իրակա-նացվում է ուսումնասիրության օբյեկտի հետազոտությունը

Մեթոդաբանությունը՝ գիտություն է մեթոդների մասին:

Դիալեկտիկայի մեթոդ

- Տնտեսական երևույթներն ու գործընթացները պետք է ուսումնասիրել իրենց ծագման, փոփոխության ու զարգացման ընթացքի մեջ
- Տնտեսական երևույթներն ու գործընթացները փոխպայմանավորված են և դրանց միջև գործում են պատճառահետևանքային կապեր

Գիտական վերացարկման /աբստրահման/ մեթոդ

Հետազոտության ընթացքում անտեսվում են երկրորդական կամ ոչ էական հատկանիշները, կապերն ու փոխհարաբե-րությունները.

Օրինակ՝ մենք չենք դիտարկում տարբեր մարդկանց աշխատավարձի չափը (թեև դա էլ է կարևոր, բայց արդեն այլ տեսան- կյունից): Նախևառաջ անհրաժեշտ է պարզել՝ ի՞նչ է իրենից ներկայացնում աշխատավարձը, երկրորդ՝ որո՞նք են դրա գործառույթները, երրորդ՝ ինչու՞ աշխա- տավարձի մակարդակը կայուն չէ և այլն:

Վերլուծության /անալիզի/ մեթոդ

Հետազոտության օբյեկտը բաժանվում է տարրերի, որոնք ուսումնասիրվում են առանձին-առանձին, բացահայտվում են դրանցից յուրաքանչյուրի առանձնահատ- կությունները, դերը, նշանակությունն ու ազդեցությունն ամբողջ համակարգի վրա:

Օրինակ՝ մարդը որպես կենդանի օրգանիզմ տարբեր օրգանների փոխհարաբերություն- ների ամբողջություն է: Մարդու անատոմիան ուսումնասիրում է նրա առանձին օրգանները, բացահայտում դրանց գործառույթները:

Համադրության /սինթեզի/ մեթոդ

Առանձնացված տարրերը հետա- զոտվում են միասնության մեջ՝ որպես մեկ ամբողջություն, ինչը հնարավո- րություն է տալիս բացահայտել դրանց փոխազդեցության արդյունքում ձևա- վորվող համակարգի զարգացման ընդհանրական միտումները:

Օրինակ՝ հասարակության ճանաչողության առումով՝ նախ ուսումնասիրվում են տվյալ երկրի պատմական զարգացման առանձնահակությունները, այնուհետև դրա տարբեր ինստիտուտների բնույթը, մասնավորապես՝ ընտրական համա- կարգը, օրենսդրական դաշտը, պետա- կան կառույցները (Ազգային ժողով, Կառավարություն, դատական մարմին- ներ), ձևավորման սկզբունքները և այլն:

Մակածության /ինդուկցիայի/ մեթոդ

Մասնավորի դեպքերին բնորոշ օրենքներն ու օրինաչափություններն տարածվում են նաև ընդհանուրի վրա՝ տեղի է ունենում մասնավոր դեպքերի ընդհանրացում կամ որ նույնն է.

ՓԱՍՏԻՑ ԱՆՑՈՒՄ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Օրինակ՝ ուսումնասիրելով առան- ձին մարդկանց հոգեբանությունը, ձգտումները, բարոյական վարքա- գիծը, պահանջմունքների բնույթը և այլն, եզրակացնում ենք, որ մարդուն բնորոշ են հոգեբանական և բարոյական վարքագծի մի շարք սկզբունքներ, որոնք ընդհանրական են բոլորի համար:

Արտածման /դեդուկցիայի/ մեթոդ

Ընդհանուրին բնորոշ օրենքներն ու օրինաչափությունները տարածվում են մասնավոր դեպքերի վրա:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՑՈՒՄ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՓԱՍՏԻ

Օրինակ՝ որևէ անհատ գերադասում է զբաղվել հոգևոր ոլորտի գործունեությամբ, իսկ մյուսը՝ զուտ տնտեսական: Այստեղ էական դեր կարող է ունենալ անձի գերադասելիությունը այս կամ այն պահանջմունքի նկատմամբ:

Համանմանության /անալոգիայի/ մեթոդ

Զուգահեռներ են անցկացվում տարբեր երևույթների և գործըն- թացների միջև, ինչը հնարավո- րություն է տալիս բացահայտել դրանց նմանություններն ու տարբերություն- ները:

Օրինակ՝ Դրամաշրջանառությունը համեմատվում է մարդու արյան շրջա- նառության հետ և այլն:

Պատմականի և տրամաբանա- կանի զուգակցման մեթոդ

Պատմական փաստերից կատարվում են տրամաբանական հետևություններ:

Այսինքն՝ երևույթների ծագումը և դրանց զար գացումը դիտարկվում է որոշակի տրամաբանական կամ պատճառական հաջորդականության գործընթացում: Այսպես օրինակ՝ փողի ծագումը բացահայտելու համար ուսումնասիրելով բոլոր երկրների փորձը, պարզ է դառնում, որ արդյունքների փոխանակության զարգացման որոշակի փուլում առաջանում է միասնական արժեչափի ձևավորման անհրաժեշտությունը:

Մաթեմատիկական մեթոդ

Տնտեսական երևույթների ու գործընթացների ուսումնասիրության ժամանակ կիրառվում են տարաբնույթ մաթեմատիկական բանաձևեր և գրաֆիկներ:

Գրաֆիկների կիրառումը հաճախ անվանվում է նաև գրաֆիկական մեթոդ:

Օրինակ՝ գնի բարձրացումը հանգեցնում է պահանջարկի նվազման: Աշխատավարձի նվազումը փոքրացնում է աշխատողների նյութական շահագրգռվածությունը: Այսինքն՝ տնտեսական երևույթների միջև առկա է ֆունկցիոնալ կախվածություն:

Ուղղակի և հակադարձ ազդեցության կապի մեթոդ

Ուղիղ կապի դեպքում անկախ փոփոխականի փոփոխությունը հանգեց- նում է կախյալի փոփոխության նույն ուղղությամբ /գների բարձրացման դեպքում առաջարկի մեծությունն աճում է/

Հակադարձ կապի դեպքում անկախ փոփոխականի փոփոխությունը հանգեց- նում է կախյալի փոփոխության հակառակ ուղղությամբ /գների բարձրացման դեպքում պահանջարկի մեծությունն նվազում է/

Վարկածի կամ հիպոթեզի մեթոդ

Առաջ է քաշվում որևէ վարկած, որը հետազոտության արդյունքում ձեռք բերված փաստերի ճնշման տակ հերքվում կամ հաստատվում է:

Օրինակ՝ երբ որոշակի վերլուծության արդյունքում պարզվում է, որ տեղի է ունենալու այս կամ այն արդյունքի գնի աճ, մարդիկ շտապում են օր առաջ ձեռք բերել դա: Սա տնտեսագիտության մեջ հայտնի է որպես սպասումների տեսություն:

Քանակական փոփոխություններից որակականին անցնելու մեթոդ

Որևէ տնտեսական երևույթի քանակական կողմերը գնահատելու, ուսումնասիրելու հիման վրա կարողանում ենք որոշակի որակական եզրակացություն կատարել:

Օրինակ՝ երբ ջուրը տաքացվում է, ենթարկվում է քանակական փոփոխության, որն արտա- հայտվում է ջերմաստիճանի բարձրացմամբ: Այդ գործընթացի շարունակությամբ ջրի ջերմաս- տիճանը հասնում է 100°–ի, որից հետո սկսվում է գոլորշիացումը: Տեղի է ունենամ մի վիճակից անցում մյուսին: Ջրի ջերմաստիճանի քանակական փոփոխությունը հանգեցնում է որակական փոփոխության:

Այլ հավասար պայմանների մեթոդ /սեթրիս պարբիուս/

Տնտեսական երևույթները բազմաթիվ են, կապված են միմյանց հետ և անընդհատ փոփոխության մեջ են:

Միաժամանակ, հնարավոր չէ ուսում- նասիրել բազմաթիվ փոփոխվող երևույթ- ների ազդեցությունը միմյանց վրա:

Հետևաբար, մի փոփոխվող երևույթի ազդեցությունը մյուսի վրա պարզաբանելու համար, մնացյալ երևույթների փոփոխու- թյունը անտեսում է՝ ընդունում է հաստատուն:

Հարց 4.

Տնտեսական կատեգորիաներն ու օրենքները

Տնտեսական օրենքները

Տնտեսական երևույթների ու գործընթացների միջև մշտապես գործող, էական, կայուն պատճա- ռահետևանքային կապերը կոչվում են տնտեսական օրենքներ:

Տնտեսական օրենքների ամբող- ջությունն իրենից ներակայացնում է տնտեսական օրենքների համակարգը:

Տնտեսական օրենքներն ըստ պատմական և ժամանակագրական բնույթի լինում են

Համընդհանուր՝ դրսևորվում են բոլոր տնտե- սական համակարգերում և պատմության զար- գացման բոլոր փուլերում/պահանջմունք անսահ- մանափակություն, շահերի հակասություն/

Ընդհանուր՝ դրսևորվում են մի քանի տնտեսական համակարգերում և պատմության զարգացման մի քանի փուլերում/առաջարկի օրենք, պահանջարկի օրենք և այլն/

Յուրահատուկ՝ դրսևորվում են մեկ տնտեսական համակարգում և պատմական զար- գացման կոնկրետ ֆորմացիայում/տնտեսական մրցակցության օրենք/

Ըստ տնտեսական հարաբերությունների փուլերի

- Արտադրության փուլում դրսևորվող
- Բաշխման փուլում դրսևորվող
- Փոխանակության փուլում դրսևորվող
- Սպառման փուլում դրսևորվող

Տնտեսական և բնության օրենքների

Նմանությունները

- Օբյեկտիվ բնույթ
- Կարող են ճանաչվել և օգտագործվել մարդու կողմից

Տարբերությունները

- Բնության օրենքները հարատև են, իսկ տնտեսականը ոչ
- Տնտեսական օրենքները գործում են միայն բանական միջավայրում,
- Բնության օրենքները միատեսակ են ներգործում հասարակության բոլոր անդամների վրա

Տնտեսական կատեգորիաներ

առավել ընդհանուր հասկացություններ են, որոնք բնութագրում են տնտեսական հարաբերությունների, օրենքների որևէ կողմը, հատկանիշը

Տնտեսական կատեգորիաները լինում են

Համընդհանուր՝ դրսևորվում են բոլոր տնտեսական համակարգերում և պատմության զարգացման բոլոր փուլերում/պահանջմունք, շահերի, աշխատանք/

Ընդհանուր՝ դրսևորվում են մի քանի տնտեսական համակարգերում և պատմության զարգացման մի քանի փուլերում/ապրանք, փող, առաջարկ, պահանջարկ դրամաշրջանառություն և այլն/

Յուրահատուկ՝ դրսևորվում են մեկ տնտեսական համակարգում և պատմական զարգացման կոնկրետ ֆորմացիայում/ տնտեսական մրցակցության օրենք/

Ըստ մակարդակի

- Միկրոտնտեսագիտական
- Մակրոտնտեսագիտական
- Միջազգային տնտեսական հարաբերություններին վերաբերող

Հարց 5

Պոզիտիվային և նորմատիվային տնտեսագիտություն

Տնտեսական երևույթների միջև պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությամբ ձեռք են բերվում համապատասխան գիտելիքներ, որոնց միջոցով ներկայացվում է իրականությունը, ինչը միաժամանակ հնարավորություն է տալիս գնահատելու որևէ գործոնի փոփոխության ազդեցությունը այս կամ այն գործընթացի վրա: Օրինակ՝ բացահայտվում է ներդրումների աճի ազդեցությունը զբաղվածության մակարդակի վրա: Սա կոչվում է **պոզիտիվային անտեսագիտություն**

Պոզիտիվային տնտեսագիտությունը

Արձանագրում է, ներկայացնում է փաստերն այնպես, ինչպես դրանք կան, գոյություն ունեն:

Պատասխանում է հետևյալ հարցերին

- **Ինչ է**
- **Ինչ կա**
- **Ինչ կլինի եթե**

Այսինքն՝ ներկա տնտեսական իրավիճակի պատճառահետևան-քային կապերի բացահայտումը, որը պոզիտիվային տնտեսագիտության խնդիրն է, նպատակ ունի տնտե-սական համապատասխան միջոցա-ռումների իրականացմամբ ապա-հովելու առաջընթաց:

Նորմատիվային տնտեսագիտությունը

Իմպերատիվ, հրամայական կերպով սամանում է, թե ինչ պետք է լինի, կամ ինչ պետք է անել/գործազրկությունը պետք է կրճատել, ապրանքի գինը պետք է բարձրացնել և այլն/

Պատասխանում է հետևյալ հարցին

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Նորմատիվային տնտեսագիտությունը կարելի է դիտարկել, որպես տնտեսական երևույթների ու գործընթացների սուբյեկտիվ ընկալում:

Նորմատիվային տնտեսագիտությունն ընկած է տնտեսական քաղաքականության հիմքում թե մակրոմակարդակում, թե միկրոմակարդակում:

Պետության տնտեսական քաղաքականու- թյունը նպատակուղղված միջոցառումների ամբող- ջություն է՝ կոչված մակրոտնտեսական կայունու- թյան և տնտեսության օպտիմալ կառուցվածքի ապահովման միջոցով կենսամակարդակի բարձրացման գլխավոր նպատակի իրականաց- մանը:

Տնտեսական հիմնական նպատակներն են

- Տնտեսական աճի ապահովումը
- Լրիվ զբաղվածության ապահովումը
- Տնտեսական արդյունավետությունը
- Գների կայուն մակարդակի ապահովումը
- Տնտեսական ազատությունը
- Կենսամակարդակի բարձրացում
- Եկամուտների արդարացի վերաբաշխումը և սոցիալական ապահովվածությունը
- Աղքատության մակարդակի նվազեցումը
- Գործազրկության նվազեցումը
- Արտաքին տնտեսական կապերի ձևավորում և զարգացում
- Առևտրային հաշվեկշիռը

Հարց 6

Տնտեսագիտական մտածելակերպի ձևավորումն և հիմնական սկզբունքները

1. Ռեսուրսների սահմանափակությունը պայմանավորում է դրանց օգտագործման այլընտրանքների առկայությունը՝ ***անվճար նախաճաշ գոյություն չունի***

Որևէ գործունեությունից առաջ անհատը կայացնում է որոշում կամ, որ նույնն է՝ կատարում է **ընտրություն:**

2. Մարդիկ ձգտում են ռացիոնալ այլընտրանքի՝ նվազագույն ծախսերով առավելագույն օգուտ ստանալու համար: Ջ. Գոռթնին դա բնութագրում է. «Տնտեսող վարքագիծ՝ հնարավոր նվազագույն ծախսերով յուրահատուկ օգուտի ստացման նպատակի ընտրություն: Տնտեսող վարքագիծը նշանակում է, որ հավասար ծախսերով միավորների ընտրության դեպքում անհատները գերապատվությունը տալիս են ամենամեծ օգտակարություն ապահովողին»

3. Ընտրությունը կատարվում է տնտեսական խթանների փոփոխության ազդեցությամբ

4 **Մարդու գործունեության այլընտրանքը պայմանավորված է ակընկալվող վերջնական արդյունքի փոփոխությամբ**։ Գոյություն ունի անմիջական կապ ստեղծված արդյունքի և դրա դիմաց ստացվելիք եկամտի միջև, ինչն ազդում է աշխատողների նյութական շահագրգռվածության մակարդակի վրա:

5 **Գործնականում իրավիճակներն անընդհատ փոփոխվում են, և մարդկանց որոշումների համար հիմք են հանդիսա- նում արդյունքի ֆանակական և որակական պարամետրերի(գին, ծախս, օգտակարություն) փոփոխու- թյունները**։ Օրինակ՝ բոլորին է հայտնի, որ գներն անընդհատ փոփոխվում են, և ներկա ու նախորդ ժամանակաշրջանի մեկ դոլարի գնողունակությունը տարբեր է: Այս առումով, նրանց հաշվարկների հիմքը դոլարի գնողունակության փոփոխությունն է:

6 Ռացիոնալ վարքագիծը կամ նպատակահարմար և արդյունավետ գործունեությունը կախված է անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկատվությունից: Օրինակ՝ եթե գները աճել են, և մարդիկ տեղյակ չեն դրա բուն պատճառներին, ապա դա ազդում է նրանց որոշումների վրա:

7 **Ցանկացած տնտեսական գործունեություն ունի իր հետևանքները, որոնք կարող են լինել անմիջական և միջնորդավորված:** Գոռթնին միջնորդավորված հետևանքները համարում է երկրորդային, «որոնք անմիջապես չեն արտահայտվում, բայց զգացվում են ժամանակի ընթացքում»: Այսպես օրինակ՝ գների բարձրացումը միանգամից ազդում է սպառման մակարդակի վրա. դա **անմիջական** հետևանք է:

8 **Արդյունքները կամ բարիքները գնահատվում են ըստ դրանց օգտակարության:** Սա նույնպես մարդկանց տնտեսական վարքագծի կարևորագույն սկզբունքներից է: Ցուրաքանչյուրը սեփական ընկա- լումներին համապատասխան է կատարում ընտրություն և արժե- վորում այս կամ այն գործունեությունն ու դրա արդյունքը: Ջ. Գոռթ- նին տնտեսագիտական այս մտածելակերպը բնութագրում է հետե- վյալ կերպ. «Բարիքի կամ ծառայության արժեքը սուբյեկտիվ է»:

9 Մարդու ներկա որոշումները կախված են ապագա գործընթացների գնահատումից: Ինչպիսին ապագայի վերաբերյալ նրա պատկերացումներն են (ինչպես կփոխվեն գները, եկամուտները, ծախսերը և այլն), այնպիսին էլ ներկա որոշումների բնույթն է: Օրինակ՝ եթե որևէ մեկը ենթադրում է, որ կահույքի գինը ապագայում կբարձրանա, ապա նա նախընտրում է այն ձեռք բերել ներկա ժամանակաշրջանում՝ ապագա կորուստներից խուսափելու համար:

4. Տնտեսագիտական մտածելակերպը սահմանային մտածելակերպ է

5. Ցանկացած ռացիոնալ ընտրություն պահանջում է ինֆորմացիայի որոշակի ծավալ, որի ձեռքբերումն իսկ ծախս է պահանջում

6. Տնտեսական գործողությունները հաճախ ստեղծում են երկրորդական հետևանքներ՝ ի լրումն անմիջականի:

7. Բարիքի կամ ծառայության արժեքը սուբյեկտիվ է

8. Տեսության փորձարկումը նրա կանխատեսելու ունակությունն է

Հարց 7

Մարդու հիմնախնդիրը տնտեսագիտության տեսության մեջ

Պահանջմունքը որևէ բարիքի նկատմամբ կարիքի բավարարման անհրաժեշտությունն է: Դա ներկայացվում է նաև որպես անբավարարվածության վիճակ, որը ձգտում է հաղթահարել մարդը:

Պահանջմունքը կարելի է սահմանել որպես մարդու գործունեության ներքին էություն, որն անփոփոխ է որպես գործունեության ներքին շարժառիթ կամ խթան:

Մարդու տնտեսական վարքագիծը, որի հիմքը պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունն է, պայմանավորված է սահմանափակ ռեսուրսների պայմաններում աշխատանքի կամ գործունեության խթանման համապատասխան սկզբունքների համակարգված կիրառությամբ:

Հարց 7

Մարդու մոդելները տնտեսագիտության մեջ

Մարդու տնտեսական վարքագծի հիմքում ընկած ընդհանրական խթանները

- Եսասիրություն
- Պահանջմունքների առավել լիարժեք բավարարման մղում
- Սեփական շահերի իրացման մղում
- Ռացիոնալ ընտրություն կատարելու մղում
- Ազատության ձգտում
- Փոխհատուցման ակնկալիք
- Անձնական և գույքային իրավունքների պաշտպանության մղում

Ռացիոնալության տեսակները

- Լրիվ ռացիոնալություն
- Սահմանափակ ռացիոնալություն՝ լիարժեք տեղեկատվություն ձեռք բերելու անկարողություն
- Օրգանական ռացիոնլություն՝ ոչ միայն լիարժեք տեղեկատվություն, այլ նաև տեղեկատվության լիարժեք վերլուծելու հնարավորություններրի սահմանափակություն

Տնտեսական մարդ

- Նյութական խթաններ → Տնտեսական վարքագիծ
- Առաջ է քաշվել դասականների կողմից
- Բնորոշ հատկանիշներն են՝
  - Լրիվ ռացիոնալություն
  - Լիարժեք տեղեկատվություն
  - Տեղեկտավությունը ռացիոնալ վերլուծելու կարողություն
  - Էգոյիզմ
  - Բացառապես նյութական խթանների գերակայություն

Երկրորդ ողողություն՝ մարդը որպես հոգեբանական էական

- Նյութական և հոգևոր խթաններ վարքագիծ
- Դիտարկվում է քեյնսականության, ինստիտուցիոնալիզմի և նոր պատմական դպրոցի հայեցակետերում
- Բնորոշ հատկանիշներն են
  - Ոչ լրիվ ռացիոնալություն
  - Մշակութային, ազգային, հոգևոր առանձնահատկությունների ներգործություն տնտեսական վարքագծի վրա

Երրորդ ուղղություն՝ սոցիալական մարդ

- Նյութական, հոգևոր և սոցիալական խթանների համատեղ ազդեցություն
- Դիտարկվում է տնտեսագիտության ժամանակակից ուղղություններում
- Բնորոշ հատկանիշներն են՝
- Օրգանական ռացիոնալություն
- Սոցիալական, մշակութային գործոնների նշանակալի ազդեցություն

Տնտեսագիտական մտածելակերպի ձևավորումը և հիմնական սկզբունքները

- Ռեսուրսի սԱհմանափակությունը պայմանավորում է դրա օգտագործման այլընտրանքների առկայությունը
- Որևէ գործունեությունից առաջ անհատը կա-յացնում է որոշում կամ, որ նույնն է՝ կատարում է **ընտրություն:**
- Մարդիկ ձգտում են **ռացիոնալ այլընտրանքի**, այսինքն՝ նվազագույն ծախսերով հասնելու առավելագույն արդյունքի:
- Մարդու գործունեության այլընտրանքը պայ-մանավորված է ակնկալվող վերջնական արդ-յունքի փոփոխությամբ:

- Գործնականում իրավիճակներն փոփոխվում են, և մարդ կանց որոշումների համար հիմք են հանդիսանում արդյունքի քանակական և որակական պարամետրերի (գին, ծախս, օգտակարություն) փոփոխությունները: Հետևապես, մարդիկ ունեն տնտեսական գիտելիքներ, թե ոչ, գործում են ըստ սահմանային մտածելակերպի:
- Ռացիոնալ վարքագիծը կամ նպատակահարմար և արդյունավետ գործունեությունները կախված է անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկատվությունից:

- Մարդու ներկա որոշումները կախված են ապագա գործընթացների գնահատումից
- Կանխատեսելու ունակությամբ օժտված են բոլոր նրանք, ովքեր իրենց գործողությունները պայմանավորում են ապագայում երևույթների սպասվելիք փոփոխություն ներով:
- Ցանկացած տնտեսական գործունեություն ունի իր տեսակները, որոնք կարող են լինել անմիջական և միջնորդավորված:

Արժեքը՝ մարդու կողմից գնահատելի միջոցների այն ամբողջությունն է, որն անհրաժեշտ է նրա կենսագործունեության համար:

Այսպիսով՝ **տնտեսագիտության տեսությունը սերտ փոխհարաբերությունների մեջ է բոլոր այն գիտությունների հետ, որոնց հետազոտության արդյունքների օգտագործումը նպաստում է ավելի խորությամբ ճանաչելու տնտեսական երևույթները և դրանց համապատասխան օրինաչափությունները:**